

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 1

2017թ. սեպտեմբերի 19-ին ժամը 14<sup>00</sup> տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդին նիստ:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2017-2018 ուս. տարվա առկա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքները:
2. 2016-2017 ուս. տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման ընթացիք քննությունների արդյունքների հաշվետվություն:
3. 2017-2018 ուս. տարվա Մազիստրատորայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաների հաստատում:

4. Ընթացիք հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ – 2017-2018 ուս. տարվա ընդունելության քննությունների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Նիստի նախագահ Արա Հակոբյանը ներկայացրեց 2017-2018 ուս. տարվա առկա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքների տվյալները:

Ըստ մասնագիտությունների բակալավրիատի առկա ուսուցման առաջին կուրս են ընդունվել՝

Կերպարվեստ – 44 ուսանող

ԴԿԱ–19 ուսանող

Հագուստի մոդելավորում – 15 ուսանող

Մշակութաբանություն – 17 ուսանող

Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում – 8 ուսանող

Երաժշտական կրթություն – 27 ուսանող

ընդհանուր՝ 130 ուսանող

Ըստ մասնագիտությունների մագիստրատուրայի առաջին կուրս են ընդունվել՝

Կերպարվեստ – 18 ուսանող

ԴԿԱ – 4 ուսանող

Մշակութաբանություն – 4 ուսանող

Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում – 9 ուսանող

Երաժշտական կրթություն – 10 ուսանող

ընդհանուր՝ 45 ուսանող

2017-2018 ուս. տարվա ընդունելության քննությունների արդյունքում ընդունված ուսանողների ընդհանուր թիվն է՝ 175:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2017-2018 ուս. տարվա առկա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքների ներկայացված ցուցակը:

2. ԼՍԵՑԻՆ – 2016-2017 ուս. տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման ընթացիք քննությունների արդյունքների հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսամնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը նշեց, որ 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման քննությունները ընթանում են ըստ հաստատված գրաֆիկի, ներկա պահին արձանագրվել են հետևյալ արդյունքները՝

Ֆակուլտետ /Նասնագիտությունը/	Ուսանողների թիվը փորձաշրջանի սկզբին	Այդ թվում՝ ակադեմիական աղմուկով	Պարտավոր են հանձնել բնութագրումները	Ընդհանուր թույլատրված են բնութագրումները	Չեն ներկայացել		Հանձնել են բնութագրումները						Ստացել են "անբավարար" գնահատ				Բացառական առաջադիմությունը	Լիկարտել են հետազոտությունները կուրսում	Թողնվել են կուրսը կրկնելու	Հետացվել են փոխադրված բնութագրումները	Փոխադրվել են հաջող կուրս	
					Հարցի վրա	խտաճարտի	Բոլոր առարկաներից	Միայն "գերազանց" գնահատականներով	Միայն "լավ" գնահատականներով	Միայն "բավարար" գնահատականներով	Միայն "անբավարար" գնահատականներով	Միայն "անբավարար" գնահատականներով	Միայն "անբավարար" գնահատականներով	Միայն "անբավարար" գնահատականներով	Միայն "անբավարար" գնահատականներով	Միայն "անբավարար" գնահատականներով					Միայն "անբավարար" գնահատականներով	Միայն "անբավարար" գնահատականներով
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	
<b>I ԿՈՒՐՍ</b>																						
Կերպարվեստ	11		11	11	0	0	2	0	0	2	0	9	2	2	5							
Արվ. տես., պատմ. և կառ.	6		6	6	0	0	3	0	0	3	0	3	2	0	1							
Մշակութաբանություն	3		3	3	0	0	2	0	0	2	0	1	0	1	0							
Երաժշտական կրթութ.	14		14	14	0	0	7	0	0	7	0	7	3	1	3							
<b>II ԿՈՒՐՍ</b>																						
Կերպարվեստ և գծագր.	29		29	29	0	0	9	0	0	9	0	20	10	3	7							
Կերպարվ.պատմ.և տես.	3		3	3	0	0	1	0	1	0	0	2	1	1	0							
Մշակութաբանություն	3		3	3	0	0	1	0	0	1	0	2	0	1	1							
Երաժշտական կրթութ.	21		21	21	0	0	7	0	0	7	0	14	5	2	7							
<b>III ԿՈՒՐՍ</b>																						
Կերպարվեստ և գծագր.	25		25	25	0	0	2	0	0	2	0	23	8	2	13							
Կերպարվ.պատմ.և տես.	8		8	8	0	0	6	2	2	2	0	2	0	0	2							
Մշակութաբանություն	18		18	18	0	0	3	0	0	3	0	15	4	5	6							
Երաժշտական կրթութ.	42		42	42	0	0	21	0	0	21	0	21	5	5	11							
<b>IV ԿՈՒՐՍ</b>																						
Կերպարվեստ և գծագր.	26		26	26	0	0	19	0	0	19	0	7	3	1	3							
Կերպարվ.պատմ.և տես.	8		8	8	0	0	4	0	0	4	0	4	2	0	2							
Մշակութաբանություն	8		8	8	0	0	6	0	2	4	0	2	0	0	2							
Երաժշտական կրթութ.	21		21	21	0	0	13	2	4	7	0	8	4	3	1							
<b>ԸՆԴԱՄՆԵՐ</b>																						
	246		246	246	0	0	106	4	9	93	0	140	49	27	64							

ՈՐՈՇԵՑԻՆ - 2016-2017 ուս. տարվա 2-րդ կիսամյակի հեռակա ուսուցման ընթացիք քննությունների արդյունքները համարել բավարար:

3. ԼՍԵՑԻՆ –2017-2018 ուս. տարվա Մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների և Մշակութաբանություն, Կերպարվեստի տեսություն և պատմություն բաժինների ավարտական աշխատանքների թեմաների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ֆակուլտետի ամբիոնների վարիչները ներկայացրեցին 1-ին կուրսերի մագիստրատուրայի ատենախոսությունների և Մշակութաբանություն, Կերպարվեստի պատմություն և տեսություն բաժինների ավարտական աշխատանքների թեմաները՝

Մշակութաբանություն մասնագիտություն

1. 19-20-րդ դարերի թիֆլիսահայ կերպարվեստի գեղագիտական ընդհանրությունը
2. Գրատունը՝ որպես վանական համալիրի մաս
3. Հայաստանը ռուս մտավորականների աչքերով / Բիտով, Գրոսման, Բելի/
4. Տոհմաձառը որպես ընտանեկան մշակույթի իրողություն
5. Ներկագիր արձանագրությունները հայկական եկեղեցիներում
6. Ավանդույթների դերը ժամանակակից հայկական ընտանիքում

Արվեստի տեսություն, պատմության և կառավարում մասնագիտություն

1. Ցուցահանդեսային բիզնես. Հայաստանի պետական և մասնավոր պատկերասրահերը
2. Կուրատորական արվեստը որպես արտ-մենեջմենթի բաղկացուցիչ մաս
3. Սյունիքի մարզի Քաջարան քաղաքի պատմամշակութային հուշարձանները.
4. Բուսական մոտիվները հայկական որմնանկարչության մեջ
5. Լատինաամերիկյան և եվրոպական ազդեցությունները Խորեն Տեր-Հարությանի քանդակներում
6. Կենցաղային ժանրը թիֆլիսահայ կերպարվեստում (19-րդ դար)
7. Աճուրդների գործունեությունը Սոտքիսի և Քրիստիի օրինակով
8. Արտ-մենեջմենթ. գեղարվեստական և ստեղծագործական բիզնես ծրագրերի ստեղծում և իրականացում
9. Արվեստի ստեղծագործությունների աճուրդ. Ստեղծման և զարգացման հնարավորությունները Հայաստանում
10. Արվեստի ստեղծագործությունների քաղաքակիրթ շուկայի ստեղծման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում
11. Ատրիբուցիա - արվեստի կառավարման ոլորտ
12. Ռուսաստանաբնակ հայ նկարիչների ստեղծագործությունը /Գևորգ Կոտյանց, Թորոս Վիզիրյան, Ալբերտ Պապիկյան/
13. Սիրանեսի ճարտարապետական ժառանգությունը
14. Նատյուրմորտի ժանրը պոլսահայ գեղանկարիչՄկրտիչ Ճիվանյանի ստեղծագործություններում
15. Գիշերային մոտիվները հայ բնանկարչության մեջ

ԴԻԶԱՅՆԻ ԵՎ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱՍԲԻՈՆ

Դեկորատիվ կիրառական արվեստ մասնագիտություն

1. Համակարգչային նախագծումը որպես ստեղծագործական գործընթաց
2. Ներկման արհեստը հայկական ոստայնանկության մեջ
3. Ապակեգործության արվեստը
4. Զարդանախշի կիրառումը ազգային ձեռարվեստում
5. Գործվածքների գեղարվեստական ձևավորում /կարպետ, գորելեն, ասեղնագործություն, դաջագարդություն, դիպակ, գորգ/
6. Ազգային կավագործություն
7. Ազգային տարագ
8. Ժամանակակից հագուստի մոդելավորման ոճերը
9. Մետաղի գեղարվեստական մշակումը Հայաստանում
10. Միջավայրի գեղարվեստական կազմակերպում
11. Մարդու կերպարը հայկական խճանկարչության մեջ
12. Շպալերի արվեստը
13. Մոդիֆիկացված գորելեն

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆ

Երաժշտական կրթություն մասնագիտություն

1. Միաձայն և երկձայն երգեցողության զարգացման մեթոդիկական կրտսեր դպրոցում:
2. Բազմաձայն երգեցողության զարգացման մեթոդիկական դպրոցի 5-7-րդ դասարաններում:
3. Սովորողների երաժշտական գործունեության տեսակների բնութագիրը և դրանց փոխկապակցվածությունը երաժշտության դասին:
4. Սովորողների երգչային ձայնի զարգացումը երաժշտության դասին և դպրոցական երգչախմբի պարապմունքներին:
5. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը և առանձնահատկությունները 5-7-րդ դասարաններում:
6. Երաժշտադիթմական զգացողության և լադային լսողության զարգացման մեթոդիկական կրտսեր դասարաններում:
7. Երաժշտությունը որպես 1-4-րդ դասարանցիների ստեղծագործական նախադրյալների ձևավորման և զարգացման միջոց:

8. Կրտսեր դասարաններում միջառարկայական կապերի իրականացումը երաժշտության միջոցով:
9. Ժողովրդական երգը որպես ազգային ինքնության զարգացման միջոց:
10. Երգեցողությունը որպես ռիթմական զգացողության և շարժումային կարողության զարգացման միջոց:
11. Մովսես Խորենացու և Ներսես Շնորհալու երաժշտամանկավարժական հայացքները:
12. Լադային սովիզացիան որպես կրտսեր դպրոցականների լսողության զարգացման միջոց:
13. Երաժշտության ընկալման ձևավորման և զարգացման ուղիները կրտսեր դպրոցում:
14. Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորումը երաժշտության դասին:
15. Երաժշտական դաստիարակության ժամանակակից պահանջները Հայաստանի հանրակրթական դպրոցներում:
16. Երաժշտամանկավարժական ժամանակակից միտքը և հայ երեխաների երաժշտական դաստիարակությունը /Հայաստանում/:
17. Կ. Ա. Մարտինսեն՝ տեսաբան, մեթոդիստ և խմբագիր:
18. Էդ. Միրզոյանի «Մանկական ալբոմ»-ի առանձնահատկությունները:
19. Էդ. Բաղդասարյանի «6 պրելյուդներ»-ի կատարողական վերլուծությունը:
20. Նեյհաուզի դաշնամուրային դպրոցի առանձնահատկությունները:
21. Արեգ Լուսինյանի «Կրկեսը» դաշնամուրային պիեսների ժողովածուն:
22. Առնո Բաբաջանյանի դաշնամուրային ստեղծագործությունները:
23. Ռոբերտ Ամիրխանյանի կինոերաժշտությունը:
24. Տիգրան Մանսուրյանի կինոերաժշտությունը:
25. Ռ. Սարգսյանի «Մանկական ալբոմ»-ը դաշնամուրի համար:
26. Է. Երկանյանի «Մանկական ալբոմ»-ը դաշնամուրի համար:
27. Էդվարդ Միրզոյանի «Մանկական ալբոմ»-ը դաշնամուրի համար:
28. Ալեքսանդր Հարությունյանի «Մանկական ալբոմ»-ը դաշնամուրի համար:
29. Մելիք Մուրադյանի «Մանկական ալբոմ»-ը դաշնամուրի համար:
30. Գրիգոր Հախինյանի «Սայաթ Նովա» կանտատը սովորողների գեղագիտական կրթության համակարգում:
31. Կառլ Չերնիի դաշնամուրային վարժությունները որպես սովորողի տեխնիկայի զարգացման միջոց:

32. Դպրոցականների բարեկրթության դաստիարակությունը երաժշտության միջոցով:
33. Առնո Բարաջանյանի դաշնամուրային մանրանվագները ուսումնական գործընթացում /դպրոցում/:
34. Մանկական օպերայի ժանրային առանձնահատկությունները:
35. Երաժշտական ընդունակությունները և նրանց զարգացման մեթոդները:
36. Կրտսեր տարիքի դպրոցականների երաժշտական ճաշակի զարգացումը երաժշտության դասերին:
37. Կոմպոզիտորների մանկական ստեղծագործությունները պատանի դաշնակահարի նվագացանկում:

### ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԱՄԲԻՈՆ

#### Կերպարվեստ մասնագիտություն

1. Մանկական գեղանկարչության առանձնահատկությունները
2. Կոմպոզիցիայի տեսական հիմնավորումը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առաջադրանքներում
3. Դիմանկարի առաջադրանքների ծրագրային բովանդակությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում
4. Արտաուսումնական պարապմունքները կերպարվեստից և նրա խնդիրները
5. Հայկական զարդամոտիվների ուսուցման առանձնահատկությունները միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում
6. Խորհրդանիշը և ռճավորման հնարավորությունները կերպարվեստում
7. Ջրաներկով պատկերագրման առանձնահատկությունները միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առաջադրանքներում
8. Միջառարկայական կապերի հիմնական տեսակները կերպարվեստում
9. Հուշակոթողների ուսումնասիրման և պատկերագրման դերը աշակերտների գեղարվեստական կրթության բնագավառում
10. Համակարգչային գրաֆիկան, որպես ուսանողների աշխարհայացքի ձևավորման միջոց
11. Համակարգչային գրաֆիկայի նշանակությունը հանրակրթական դպրոցում
12. Համակարգչային գրաֆիկայի ուսումնական մոդելը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում
13. Հայկական էպոսի ձևավորման առանձնահատկությունները 5-6-րդ դասարաններում (Մասունցի Դավիթ)

14. Որմնանկարչության տեխնոլոգիան ճարտարապետության մեջ
15. Գրքի տպագրության առանձնահատկությունները (հաստոցային գրաֆիկայի օրինակում)
16. Գրաֆիկական աշխատանքների կիրառելիությունը հանրակրթական դպրոցում
17. Սովարաթղթի ձևանմուշով տպագրության եղանակները հանրակրթական դպրոցում
18. Գրաֆիկական նյութերի և միջոցների կիրառության իմացությունը նկարիչ-մանկավարժի ձևավորման գործընթացում
19. Ճիշտ լուսավորության խնդիրները ուսումնական առաջադրանքներում
20. Ուսումնական քանդակի ուսուցման սկզբունքները
21. Հայկական հանրակրթական դպրոցի անվան հուշարձանների դերը աշակերտի աշխարհընկալման ձևավորման գործում
22. Քաղաքային քանդակի գեղագիտական նշանակությունը (Երևանի օրինակով)
23. Երևանի քանդակախմբերի կատարման առանձնահատկությունները
24. Հայկական դասական գրաֆիկական ստեղծագործության դերը աշակերտի գեղագիտական ճաշակի ձևավորման գործում
25. Հայկական դասական քանդակի դերը աշակերտի գեղագիտական ճաշակի ձևավորման գործում
26. Ծեփագործությունը ներառական երեխաների գեղագիտական ճաշակի զարգացման միջոց
27. Հայ դասական արվեստագետների մանկավարժական գործունեությունը ՀՊՄՀ-ի կերպարվեստի ամբիոնում
28. Մանկավարժական պրակտիկայի նշանակությունը նկարիչ-մանկավարժի ձևավորման գործում
29. Կերպարվեստի ստեղծագործությունների վերատպությունների դերը հանրակրթական առարկաների դասագրքերում

- ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԺՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ
1. Ներկազմի արձանագրությունները 7-13-րդ դդ. հայկական եկեղեցիներում
  2. Թեքեյան մշակութային կենտրոնի գործունեությունը /Հայաստանի անկախությունից՝ մինչ օրս/
  3. Վերնիսաժի՝ դերը Երևանի մշակութային կյանքում



4. Ավանդական հարսանյաց ծեսը արևելյան Հայաստանում
5. Ավանդական հարսանյաց ծեսը արևմտյան Հայաստանում
6. Արևմտյան Հայաստանի տարազը որպես մշակութային արժեք
7. Արևելյան Հայաստանի տարազը որպես մշակութային արժեք
8. Ծովագյուղի պատմամշակութային կոթողները
9. Սպիտակի շրջանի Լեռնավան գյուղի պատմամշակութային նշանակության կառույցները
10. Զավախքի Սուլդա գյուղի մշակութային առօրյան
11. Թալինի տարածաշրջանի Զովասար գյուղի հուշարձանները և մշակութային առօրյան
12. Վալերի Բրյուսովի գնահատականը հայ մշակույթին
13. Օրբելյան իշխանական տոհմի մշակութային գործունեությունը
14. Ձեռագիր մատյանների դերը հայ մշակույթում
15. Շիրակի մարզի Արթիկի շրջանի մշակութային կոթողները
16. Նոյեմբերյան համայնքի պատմամշակութային հուշարձանները
17. Գեղարքունիքի մարզի Դոմաշեն գյուղի մշակութային հուշարձաններն ու պատմությունը
18. Մարտունու շրջանի պատմամշակութային անցյալից
19. Գրերի գյուղի ազդեցությունը հայ մշակույթում
20. Արվեստի կառավարումը /Արտ մենեջմենթը/ որպես մշակութահասարակական գործունեության ոլորտ
21. Մատենադարանի դերն ու նշանակությունը հայ մշակույթում
22. Վիլյամ Սարոյանի ստեղծագործությունները Էկրանին և բեմում
23. Թանաքի և ներկերի պատրաստումը հայ միջնադարյան գրչատներում / 11-13 -րդ դդ./

24. Ձեռագրերում հիշատակարան գրելու մշակույթը /9-11-րդ դդ./
25. Խուրջինների գեղագիտական և կիրառական նշանակությունը
26. ՀՊՄՀ-ի գեղարվեստի ֆակուլտետի կին արվեստագետները
27. Խորհրդահայ քարոզչական մոնումենտալ արվեստը /Արա Հարությունյան/
28. Համահեղինակությունը որպես մշակութային երևույթ (կերպարվեստ)
29. Մուշի պատմամշակութային կոթողները
30. Տաթևի վանական համալիր. դերը հայ մշակույթում
31. Տավուշի մարզի Ձորափոր բնակավայրի հուշարձանները

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԲԱԺՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Վարդգես Գուլիկյանի ստեղծագործական և մանկավարժական գործունեությունը
2. Սպորտի թեման խորհրդահայ կերպարվեստում
3. Ձմեռը հայ բնանկարչության մեջ 19-րդ դարի վերջ- 20-րդ դարի սկիզբ
4. ՀՊՄՀ-ի գեղարվեստական ֆակուլտետի գրաֆիկայի վարպետները /1960-1980-ականներ/
5. Կուտինայի հայկական խեցեղենը
6. Արտաշես Հունանյանի և Վահրամ Խաչիկյանի գրաֆիկական ստեղծագործությունները / „Աբու - Լալա Մահարի,, պոեմի նկարազարդումները/
7. Աշոտ Մելքոնյանի ստեղծագործությունը
8. Հովհաննես Թումանյանի հեքիաթների նկարազարդումները /Հ. Թումանյանի թանգարանի հավաքածու/
9. Հովհաննես Թումանյանի պոեմների նկարազարդումները /Հ. Թումանյանի թանգարանի հավաքածու/
10. Ազգային թեմատիկան Մուրեն Սաֆարյանի արվեստում

11. Գորգագործությունը Արցախում
12. Գորգագործությունը Լոռիում
13. Հարություն Հովհաննիսյանի գրաֆիկական ստեղծագործությունները
14. Դիմանկարի ժանրը Սուրեն Սաֆարյանի ստեղծագործությունում
15. Արտաշես Հունանյանի արվեստը
16. Սասունցի Դավիդ Էպոսի մեկնաբանումները Հարոբ Կոջոյանի և Արտաշես Հովսեփյանի արվեստում
17. Ցորենը և հացը հայ կերպարվեստում
18. Եղիշե Թադևոսյանի „Հանճարն ու ամբոխը,, ստեղծագործությունը
19. Մարտիրոս Սարյանի „Երեք հասակ,, աշխատանքը
20. Հակոբ Կոջոյանի „Տաթևի գնդակահարությունը,, աշխատանքը
21. Գևորգ Գրիգորյանը /Ջոտտոն/՝ 20 -րդ դարի առաջին կեսի մոդերնիստ նկարիչը
22. Լյուդվիգ Բերբերյանի ստեղծագործությունը
23. Հմայակ Ավետիսյանի ստեղծագործությունը
24. Դիմանկարի ժանրը Հովհաննես Զարդարյանի արվեստում
25. Համահեղինակությունը հայ կերպարվեստում (Էդուարդ Իսաբեկյան-Դմիտրի Նալբանդյան, Հովհաննես Զարդարյան-Եփրեմ Սավայան)
26. Ղուկաս Չուբարյանի ստեղծագործական և մանկավարժական գործունեությունը
27. Ստեփան Գրիգորյանի ստեղծագործական և մանկավարժական գործունեությունը

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2017-2018 ուս. տարվա Մագիստրատուրայի 1-ին կուրսի աստենախոսությունների և Մշակութաբանություն, Կերպարվեստի տեսություն և պատմություն բաժինների ավարտական աշխատանքների թեմաները:

ՆԻՍՏԻՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՔԵՇԻՇՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի  
2017թ. հոկտեմբերի 9-ի ընդլայնված նիստի

### ՕՐԱԿԱՐԳ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի  
Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի ընտրություն

ԼՍԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի  
համար ընտրության հարցը: Ֆակուլտետի խորհրդի 18 անդամներից ներկա էին 18-ը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Նիստի նախագահ Հայկական պետական մանկավարժական  
համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը նշեց, որ Գեղարվեստական  
կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնին առաջադրված է մեկ թեկնածու՝  
արվեստագիտության դոկտոր, դոցենտ Արա Հրավարդի Հակոբյանը:

Ելույթով հանդես եկավ Արա Հակոբյանը: Նա անդրադարձավ գեղարվեստական  
կրթության ֆակուլտետի պատմությանը: Նշեց ֆակուլտետի նախկին ղեկավարների,  
ֆակուլտետում դասավանդած հանրապետության նշանավոր արվեստագետ-  
մանկավարժների անունները՝ ցանկանալով շարունակել նրանց բարի ավանդույթները: Ա.  
Հակոբյանը ներկայացրեց ֆակուլտետի ամբիոններն ու մասնագիտությունները, ապա  
ֆակուլտետի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները, ինչպես  
նաև ներկայացվեց առաջիկա ծրագրերն ու բարեփոխումները:

Նիստի նախագահ, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանը առաջարկեց ընտրել հաշվիչ  
հանձնաժողով, որն էլ միաձայն որոշմամբ կազմվեց երեք անձից՝ Արվեստի պատմության,  
տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ  
Սաթենիկ Մելիքյան, ֆակուլտետի արհմիության նախագահ, կերպարվեստի ամբիոնի

ասիստենտ Աղվան Մխիթարյան, ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ջարուհի Խաչատրյան: Առաջարկվեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թեկնածու Արա Հակոբյանի ընտրությունը անցկացնել փակ գաղտնի քվեարկությամբ: Քվեարկության արդյունքում կողմ եղան խորհրդի բոլոր անդամները:

Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մելիքյանը ներկայացրեց արդյունքները՝

կողմ - 18

դեմ - 0

անվավեր – 0

ՈՐՈՇՎԵՑ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար դրված քվեարկությունը համարել ավարտված:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՔԵՇԻՇՅԱՆ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 3

2017թ. նոյեմբերի 21-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդին նիստի

#### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության դոկտոր Արա Հրավարդի Հակոբյանի պրոֆեսորության հարցը:
2. Հեռակա 2016-2017 ուստարվա հեռակա ուսուցման քննաշրջանի արդյունքների ամփոփում ֆակուլտետի խորհրդի 18 անդամներից ներկա էին 16-ը:

1. **Լսեցին** – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության դոկտոր Արա Հրավարդի Հակոբյանի պրոֆեսորության հարցը:  
Նիստի նախագահ Ա. Հակոբյանը առաջարկեց նիստը վարի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը: Հարցը քննարկելու և ընտրությանը ներկայացնելու համար խոսքը տրվեց Լիանա Այվազյանին, որը ներկայացրեց ԲՈՀ-ի պահանջվելիք բոլոր փաստաթղթերը, ներկայացված Ա. Հակոբյանի կողմից, միաժամանակ Արա Հակոբյանի գործունեությունը: Լ. Այվազյանը առաջարկեց Ա. Հակոբյանի պրոֆեսորության հարցը դնել քննարկման:

**Արտահայտվեցին** – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սաթենիկ Մելիքյանը, դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստների ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը, կերպարվեստի ամբիոնի դոցենտ Միսակ Մելքոնյանը և այլք: Նրանք նշեցին, որ Ա. Հակոբյանը իր գործունեության ընթացքում

արժանացել է լավ գեղանկարչի և արվեստաբանի գնահատականի, նա փորձառու մանկավարժ է և արժանի է պրոֆեսորի կոչմանը:

Առաջարկվեց- Արա Հրավարդի Հակոբյանի պրոֆեսորության հարցը դնել քվեարկության: Առաջարկվեց բաց քվեարկություն: Արդյունքում խորհրդի ներկա գտնվող բոլոր 16 անդամները միաձայն քվեարկեցին կողմ:

կողմ - 16

դեմ - 0

ձեռնպահ – 0

**Որոշեցին** – Միջնորդել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին քննարկելու և երաշխավորելու արվեստագիտության դոկտոր, դոցենտ Արա Հրավարդի Հակոբյանի պրոֆեսորության հարցը:

**2.Լսեցին** – Հեռակա 2016-2017 ուստարվա հեռակա ուսուցման քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը ներկայացրեց 2016-2017 ուստարվա 1-3-կուրսերի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքները.

Ֆակուլտետ /Ճանաչագիրությունը/	Ուսանողների թիվը բնական շրջանի պլանին	Այդ թվում՝ ավարտելիական արձակուրդում	Պարտավոր են համընել բնությունները	Ընդհանրապես բույսատրված են բնություններին	Չեն ներկայացել		Հանձնել են բնությունները					Ստացել են "անբավարար" գնահատ				Բացարձակ արաջարկիմու-բյունը	Ավարտել են ռեսավան ուսուցման կուրսը	Թողնվել են կուրսը կրկնելու	Հետացվել են փոխարդական բնություններին արդյունքով	Փոխարդական և են հաջորդ կուրս	
					Հարգելի պատճառով	Ամհարգելի պատճառով	Բոլոր առարկաներից	Միայն "գերա-գանց" գնահատակներով	Միայն "գերազ." և "լավ" գնահատակներով	հատը գնահատակներով	Միայն "բավարար" գնահատ.	Ընդամենը	Մեկ "անբավ."	Երկու "անբավ."	Երեք "անբավ."					Ընդամենը	Այլ օկում. աստիճանում
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
<b>I ԿՈՒՐՍ</b>																					
Կերպարվեստ	11		11	11	0	0	2	0	0	2	0	9	2	2	5				1	10	2
Արվ. տես., պատմ. և կառ.	6		6	6	0	0	3	0	0	3	0	3	2	0	1				0	6	1
Մշակութաբանություն	3		3	3	0	0	2	0	0	2	0	1	0	1	0				0	3	0
Երաժշտական կրթութ.	14		14	14	0	0	7	0	0	7	0	7	3	1	3				0	14	2
<b>II ԿՈՒՐՍ</b>																					
Կերպարվեստ և գծագր.	29		29	29	0	0	9	0	0	9	0	20	10	3	7				0	29	7
Կերպարվ.պատմ.և տես.	3		3	3	0	0	1	0	1	0	0	2	1	1	0				0	3	0
Մշակութաբանություն	3		3	3	0	0	1	0	0	1	0	2	0	1	1				0	3	0
Երաժշտական կրթութ.	21		21	21	0	0	7	0	0	7	0	14	5	2	7				2	19	9
<b>III ԿՈՒՐՍ</b>																					
Կերպարվեստ և գծագր.	25		25	25	0	0	2	0	0	2	0	23	8	2	13				3	22	9
Կերպարվ.պատմ.և տես.	8		8	8	0	0	6	2	2	2	0	2	0	0	2				0	8	0
Մշակութաբանություն	18		18	18	0	0	3	0	0	3	0	15	4	5	6				0	18	6
Երաժշտական կրթութ.	42		42	42	0	0	21	0	0	21	0	21	5	5	11				1	41	1



**Որոշեցին-** 2016-2017 ուստարվա հեռակա ուսուցման 1-3 կուրսերի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Լ. ԱՅՎԱԶՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 4

2017թ. նոյեմբերի 28-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի

խորհրդի նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2017-2018 ուստարվա գիտական աշխատանքների հաշվետվություն (կերպարվեստի ամբիոն)
2. Ավարտական աշխատանքների ընթացքը
3. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը
4. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 18 անդամից 14-ը

**1.Լսեցին** – 2017-2018 ուստարվա կերպարվեստի ամբիոնի ընթացիկ աշխատանքների հաշվետվության հարցը:

**Արտահայտվեցին** – Կերպարվեստի ամբիոնի վարիչի տեղակալ դոցենտ Միսակ Մելքոնյանը, ներկայացրեց ամբիոնի ընթացիկ աշխատանքների հաշվետվությունը, որում ներառվեց նաև ավարտական աշխատանքների ընթացքը: Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը առաջարկեց ակտիվացնել ուսանողական ցուցահանդեսների կազմակերպման ընթացքը:

**Որոշեցին** – Կերպարվեստի ամբիոնի ընթացիկ աշխատանքները գնահատել բավարար:

**2.Լսեցին** – ֆակուլտետի ամբիոններում ավարտական աշխատանքների ընթացքը:

**Արտահայտվեցին** – Արվեստի պատմության տեսության և մշակութաբանության ամբիոնի վ/պ դոցենտ, արվեստագիտության թեկնածու Սաթենիկ Մելիքյանը: Դեկորատիվ-կիրառական արվեստի ամբիոնի վարիչ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը: Երաժշտության

կրթության ամբիոնի վարիչի պ/կ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ Սարգիս Էլբակյանը:  
Նրանք ներկայացրեցին ամբիոններում անցկացվող ավարտական  
աշխատանքների ընթացքը:

**Որոշեցին**- ամբիոններում ավարտական աշխատանքների ընթացքը համարել  
բավարար:

**3.Լսեցին** – Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը:

**Արտահայտվեցին** – Կերպարվեստի ամբիոնի վարիչի պ/կ Արա Հակոբյանը,  
երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ Սարգիս Էլբակյանը,  
նշեցին, որ ամբիոնների վերջին նիստերում կատարվել են համապատասխան  
ատեստավորումները, հայցորդների կատարած աշխատանքները  
համապատասխանում են ատեստավորման պահանջներին:

**Որոշեցին** – Ատեստավորել՝ կերպարվեստի ամբիոնի ասպիրանտ Հակոբ  
Մուրադյանին, երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Մերի  
Բաղդասարյանին, կերպարվեստի ամբիոնի հայցորդներ Մարուսյա  
Մանասյանին, Հռիփսիմե Մարոնյանին, Լիլիթ Ներսիսյանին:

#### **4. Ընթացիկ հարցեր**

**ա) Լսեցին** – Կերպարվեստի ամբիոնի դասախոս Լիլիթ Անատոլիի Գրիգորյանի  
«Զրույցներ արվեստի թեմայով (պարապմունքների ուղեցույց 4-7  
դասարաններում)» խորագրով ուսումնական ձեռնարկի հրատարակության  
երաշխավորելու հարցը: Նիստի նախագահ Արա Հակոբյանը նշեց, որ առկա են  
համապատասխան բոլոր փաստաթղթերը, կան դրական կարծիքներ ՀՀ ԳԱԱ  
թղթակից անդամ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանից և  
Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնի  
գիտական գծով տնօրենի տեղակալ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ  
Եվգենիա Քալանթարյանից:

**Արտահայտվեցին** – դոցենտ Միսակ Մելքոնյանը, պրոֆեսորներ Յ. Յուզբաշյանը և Լ. Ներսիսյանը, վերջիններս նշեցին, որ աշխատանքի բովանդակությանը ծանոթ են և այն արժանի է հրատարակման:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Երաշխավորել հրատարակության կերպարվեստի ամբիոնի դասախոս Լ. Գրիգորյանի «Զրույցներ արվեստի թեմայով (պարապմունքների ուղեցույց 4-7 դասարաններ)» ուսումնական ձեռնարկը:

Կողմ-14,

Դեմ- 0,

Ձեռնպահ – 0

**բ) Լսեցին** – Ավարտական աշխատանքներից մեկ օրինակ ԲՈՒՀ-ում պահելու հարցը:

**Որոշեցին** – Պահվող մեկ նմուշը ծառայում է որպես ուսումնական և ուսուցողական դիդակտիկ ցուցանմուշ և ֆակուլտետային գործունեության հաշվետվություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 5

2017թ. դեկտեմբերի 25-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի  
ընդլայնված նիստի

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆակուլտետի միջազգային կապերի հաստատման հարցը
2. 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում
3. Հեռակա ուսուցման 2016-2017 ուստարվա 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփում
4. Հեռակա ուսուցման 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստում
5. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 18 անդամից 16-ը

**1.Լսեցին** – Ֆակուլտետի միջազգային կապերի հաստատման հարցը

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, գիտական գծով դեկանի տեղակալ Արմինե Բաղդասարյանը ներկայացրեցին ֆակուլտետի միջազգայնացման հարցի շուրջ ծավալված գործընթացը:

Ելույթ ունեցավ միջազգային համագործակցության բաժնի պետ Քրիստինե Ծատուրյանը, իր ելույթում նա նշեց համալսարանի միջազգայնացմանն ուղղված ընդհանուր դիրքորոշումը: Ի ցույց դնելով դրան հասնելու ճանապարհը, որը հիմնականում կապված էր օտարերկրյա ուսանողների հավաքագրման հետ:

**Որոշեցին** – շարունակել ֆակուլտետում ձևավորվող միջազգային համագործակցության ընթացքը, հետագա պայմանագրերի կնքման նպատակով:

**2.Լսեցին** – 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման հարցը

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը ներկայացրեց 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստման շուրջ կատարված աշխատանքները:

**Որոշեցին** - 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքը համարել բավարար:

**3.Լսեցին** – Հեռակա ուսուցման 2016-2017 ուստարվա 4-րդ կուրսի 2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփում:

**Արտահայտվեցին** – ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը իր ելույթում ամփոփեց հեռակա ուսուցման 2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակի արդյունքները:

Ֆակուլտետ /նասնագիտությունը/	Ուսանողների թիվը ընդամենը շրջանի սկզբին	Այդ թվում՝ ակադեմիական	Պարտակիր են հանձնել քննությունները	Ընդհանուր թույլատրված են քննությունների	Զեքն ներկայացել		Հանձնել են քննությունները					Ստացել են "անբավարար" գնահատ				Բացարձակ առաջադիմությունը	Ավարտել են ռեական ուսուցման կուրսը	Թողնվել են կուրսը կրկնելու	Հետացվել են փոխարտական քննությունների արդյունքով	Փոխարկվել են հաջորդ կուրս	
					Հարգելի պատճառով	Անհարգելի պատճառով	Բոլոր առարկաներից	Միայն "զերա-զանց" գնահատականներով	Միայն "զերազ." կ "լավ" գնահատականներով	Խստը գնահատականներով	Միայն "բավարար" գնահատ	Ընդամենը	Մեկ "անբավ."	Երկու "անբավ."	Երեք "անբավ."					Ընդամենը	Այդ թվում՝
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
<b>Ի Վ ԿՈՒՐՍ</b>																					
